ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝

ՀՌՀ _______________
ինստիտուտի տնօրեն

"____"______ 202__թ.

Ինստիտուտ՝

Ամբիոն՝

*Հեղինակ՝ Համբարձումյան Հ. Հ.*

*ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ*

Դասընթաց՝ Մենեջմենթի հիմունքներ

Կրթական ծրագիր՝ 041301.01.6 Զբոսաշրջություն

ԵՐԵՎԱՆ

## 1. Ներածություն.

Կառավարումը համընդհանուր երևույթ է: Բոլոր կազմակերպությունները՝ բիզնես, քաղաքական, մշակութային կամ սոցիալական, ներգրավված են կառավարման մեջ, քանի որ հենց մենեջմենթն է ուղղորդում դրանցում ներառված անհատական ջանքերը որոշակի նպատակի իրականացման ուղղությամբ:

Ըստ Հարոլդ Քունցի, «Կառավարումը արվեստ է, որպեսզի գործերը կատարվեն մարդկանց միջոցով և մարդկանց հետ ձևականորեն կազմակերպված խմբերում: Այն միջավայր ստեղծելու արվեստ է, որտեղ մարդիկ կարող են դրսևորել իրենց հմտությունները և համագործակցել խմբային նպատակներին հասնելու համար»:

Ըստ Թեյլորի՝ «Կառավարումը արվեստ է՝ իմանալու, թե ինչ անել, երբ անել և տեսնել, որ դա արվում է լավագույն և ամենաէժան ձևով»:

Ըստ Հ. Մինցբերգի §Կառավարումը փորձառություն է՝ հիմնված արվեստի, արհեստի և գիտության վրա¦:

«Կառավարումը» այլոց հետ և նրանց միջոցով կազմակերպության նպատակներին արդյունավետորեն հասնելու գործընթաց է՝ փոփոխվող աշխարհում սահմանափակ ռեսուրսների արդյունավետ օգտագործման միջոցով:

Իհարկե, այս նպատակները կարող են տարբեր լինել՝ կախված կազմակերպության առանձնահատկություններով: Օրինակ՝ մի ձեռնարկության համար դա կարող է լինել նոր ապրանքների թողարկում՝ շուկայի հետազոտություններ անցկացնելով, իսկ մյուսի համար՝ առավելագույն շահույթը՝ ծախսերը նվազագույնի հասցնելու միջոցով:

Կառավարումը ենթադրում է ներքին միջավայրի ձևավորումը. կառավարումն է, որ միավորում է արտադրության տարբեր գործոնները՝ արդյունքի հասնելու նպատակով:

Հետևաբար, ղեկավարության պարտականությունն է ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք նպաստում են առավելագույն ջանքերին, որպեսզի մարդիկ կարողանան արդյունավետ կատարել իրենց առաջադրանքը:

**2. Դասընթացի նպատակը և խնդիրը.**

**Դասընթացի նպատակն է** ուսանել ուսանողներին մենեջմենթի բնագավառում հատուկ գիտելիքներով և ձևավորել գիտա-մշակված մեթոդների և եղանակների կիրառման կարողություններ, որոնք անհրաժեշտ են նրանց մասնագիտական աճի գործընթացում:

**Դասընթացի խնդիրներն են՝** Ուսանողներին ծանոթացնել մենեջմենթի հիմնական մեթոդներին և սկզբունքներին, ներկայացնել մենեջմենթի դասական և ժամանակակից դպրոցների հիմնական դրույթները և կառավարման առանձնահատկությունները, ներկայացնել կազմակերպության միջավայրը և սովորեցնել իրականացնելու վերջինիս արտաքին և ներքին գործոնների իրավիճակային վերլուծություն և գնահատում, ծանոթացնել կառավարման հիմնական չորս գործառույթներին, ուսումնասիրել վերջիններիս առանձնահատկությունները ըստ ժամանակակից արևմտյան, եվրոպական և ասիական մենեջմենթի դպրոցների, սովորեցնել կապակցող գործընթացների վերլուծության և կառավարման հիմնական փուլերն ու սկզբունքները, ներկայացնել իշխանության և առաջնորդման ժամանակակից տեսությունները, ներկայացնել անձնակազմի և մարդկային ռեսուրսների կառավարման առանձնահատկությունները ժամանակակից պայմաններում, ուսումնասիրել կոնֆլիկտների, փոփոխությունների և սթրեսների կառավարման առանձնահատկությունները ժամանակակից կազմակերպություններում:

**2.1. Կրթական վերջնարդյունքները**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողները **պետք է.**

**իմանան՝**

- մենեջմենթի տեսության և պրակտիկայի առանցքային հիմնադրույթները,
- կառավարման կազմակերպական կառուցվածքների նախագծման հիմնադրույթները,
- մոտիվացիոն արդյունավետ համակարգի մշակման գործընթացը,
- կառավարչական ռացիոնալ որոշումների ընդունման կառուցակարգերը,

- կոնֆլիկտային իրավիճակների և փոփոխությունների արդյունավետ կառավարումը:

**կարողանան՝**

- մշակել առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների կառավարման օպտիմալ կազմակերպական կառուցվածքներ՝ ելնելով շուկայի պահանջներից
- մշակել գործարարության ծրագրեր որոշակի մեթոդաբանական սկզբունքներով և հիմնական բաժիններով
- մշակել նոր կիրառություններ կառավարման տարբեր ոլորտներում օգտագործվող պլանավորման, կազմակերպման, կարգավորման և վերահսկողության ժամանակակից մեթոդների և տեղեկատվական համակարգերի ներդրման համար:

**ունակ լինեն՝**

- դրսևորել տարբեր կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացման և ֆինանսական կայունության ապահովման միջոցառումների գործնական կիրառության կարողություն՝ համակարգային և իրավիճակային կառավարման համապատասխան կառուցակարգերի կիրառման միջոցով
- դրսևորել գործընթացային մոտեցման հիման վրա առևտրային կազմակերպությունների կառավարման տարբեր մեթոդների գործնական կիրառության կարողություն:

**2.2. Դասընթացի աշխատատարության բաշխումն ըստ ուսումնական աշխատանքի տեսակների (ակադեմիական ժամերով)**

| Ուսումնական աշխատանքների տեսակները | Ամբողջը, ակ. ժամ. | Բաշխում ըստ կիսամյակների | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | 1 Կիս. | 2 Կիս. | 3 Կիս. | 4 կիս. | 5 Կիս. | 6 Կիս. |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| **1.Ըստ կիսամյակի ընդհանուր դասընթացի ուսուցման ծանրաբեռնվածությունը** | **72** | | **72** | | | | |
| 1.1. Լսարանային պարապմունքներ: | **36** | | **36** | | | | |
| 1.1.1.Դասախոսություններ | **18** | | **18** | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1.1.2.Լաբորատոր աշխատանքներ | 18 | | 18 | | | | |
| 1.2. Ինքնուրույն աշխատանք | 36 | | 36 | | | | |
| Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք) | Քննություն | | Քննություն | | | | |

**2.3.Դասընթացի թեմատիկ պլան**

| Դասընթացի բաժինները և թեմաները | Ընդհանուր (ակ. ժամ) | Դասախոսություններ (ակ. ժամ) | Լաբոր. (ակ. ժամ) | Պարապմունքների այլ տեսակներ (ակ. ժամ) |
|---|---|---|---|---|
| Թեմա 1. Կառավարման էությունը և մեթոդաբանությունը | 4 | 2 | 2 | |
| Թեմա 2. Կառավարման տեսության զարգացման պատմական ակնարկ | 2 | 2 | 2 | |
| Թեմա 3. Կազմակերպության ներքին և արտաքին միջավայրերը | 8 | 4 | 4 | |
| Թեմա 4. Ռազմավարական պլանավորում | 8 | 4 | 4 | |
| Թեմա 5. Կազմակերպում | 4 | 2 | 2 | |
| Թեմա 6. Մոտիվացիան և դրա ձևերը | 4 | 2 | 2 | |
| Թեմա 7. Վերահսկողությունը որպես կառավարման գործառույթ | 4 | 2 | 2 | |
| Թեմա 8. Կառավարման մեթոդները | 4 | 2 | 2 | |
| Թեմա 9. Կառավարման կապակցող գործընթացները | 8 | 4 | 4 | |
| Թեմա 10. Կազմակերպությունների կազմակերպաիրավական ձևերը և դրանց կառավարման առանձնահատկությունները | 4 | 2 | 2 | |
| Թեմա 11. Խմբերի կառավարումը: Իշխանություն և առաջնորդում | 4 | 2 | 2 | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Թեմա 12. Կոնֆլիկտների, փոփոխությունների և սթրեսների կառավարում | 8 | 4 | 4 | |
| Թեմա 13. Մարդկային ռեսուրսների կառավարումը | 4 | 2 | 2 | |
| **Ընդամենը** | **68** | **34** | **34** | |

**3. Դասընթացի թեմաները**

**Թեմա1. Կառավարման էությունը և մեթոդաբանությունը**

- կառավարման անհրաժեշտությունը, էությունը և զարգացման փուլերը
- կառավարման մեթոդաբանությունը և սկզբունքները
- կազմակերպությունների ձևերը և կառավարման մակարդակները

Առաջին թեման նվիրված է կառավարման էությանն ու մեթոդաբանությանը: Մասնավորապես՝ այս բաժնում ներկայացվում են կառավարման էությունն ու անհրաժեշտությունը, կառավարման գիտության զարգացման փուլերը, կառավարման մեթոդաբանությունն ու հիմնական սկզբունքները, կառավարման տեսության հիմնական կատեգորիաները:

**Թեմա 2. Կառավարման տեսության զարգացման պատմական ակնարկ**

- գիտական կառավարման դպրոց
- վարչական դպրոց
- մարդկային հարաբերությունների և վարքաբանական գիտությունների դպրոց
- քանակական դպրոց
- համակարգային և իրավիճակային մոտեցումները կառավարման գործընթացում
- հայ կառավարչական մտքի զարգացման պատմություն

Երկրորդ թեման նվիրված է կառավարման տեսության զարգացման պատմական հարցերին, մասնավորապես՝ կառավարման գիտության ձևավորման նախադրյալներին: Այս բաժնում ուսումնասիրվում են կառավարման դասական դպրոցները՝ հանձինս գիտական կառավարման, վարչական, մարդկային հարաբերությունների և քանակական

կամ կառավարման գիտության դպրոցների գործունեության առանձնահատկություններին: Միաժամանակ ներկայացվում է հայ կառավարչական մտքի զարգացման պատմությունը:

**Թեմա 3. Կազմակերպության ներքին և արտաքին միջավայրերը**

- կազմակերպությունը որպես սոցիոտեխնի-կական համակարգ
- նպատակների դասակարգումը
- կազմակերպության կառուցվածքի բնութագրությունը
- կազմակերպության խնդիրների դասակարգումը
- Տեխնոլոգիայի էությունը և դասակարգումը
- Մարդը որպես կազմակերպության ներքին փոփոխական
- կազմակերպության արտաքին միջավայրի բնութագրությունը
- ուղղակի և անուղղակի ներգործության միջավայրեր

Երրորդ թեման նվիրված է կազմակերպության ներքին և արտաքին միջավայրերի բնութագրությանը: Այս բաժնում հանգամանորեն վերլուծվում է կազմակերպությունը՝ որպես սոցիոտեխնիկական համակարգ, ներկայացվում են կազմակերպության ներքին միջավայրի հինգ հիմնական ենթահամակարգերը: Միաժամանակ ներկայացվում է կազմակերպության արտաքին միջավայրի ընդհանուր բնութագիրը՝ ըստ ուղղակի և անուղղակի ներգործության միջավայրերի:

**Թեմա4. Ռազմավարական պլանավորում**

- ռազմավարական պլանավորման էությունը և խնդիրները
- ռազմավարական պլանավորման տրամաբանությունն ու փուլերը
- ռազմավարական պլանավորման մակարդակները
- գործարարության ծրագրի էությունը, կառուցվածքը
- գործարարության ծրագրի մշակման մեթոդաբանությունը

Չորրորդ թեման նվիրված է ռազմավարական պլանավորմանը: Այս բաժնում ներկայացվում է պլանավորումը՝ որպես կառավարման հիմնական գործառույթ, լուսաբանվում է կանխատեսման էությունն ու հիմնական ձևերը, այնուհետև ներկայացվում է ռազմավարական պլանավորման տրամաբանությունն ու փուլերը և

ռազմավարական պլանավորման մակարդակները, իրականացվում է գործարարության ծրագրի մշակման մեթոդական սկզբունքների ուսումնասիրություն։

**Թեմա 5. Կազմակերպում**

- կազմակերպման գործառույթի էությունը
- գծային և շտաբային լիազորություններ
- լիազորությունների պատվիրակում և պատասխանատվություն
- կառավարման կազմակերպական կառուցվածքի տարատեսակները
- բյուրոկրատական /մեխանիստական/ և ադապտիվ /օրգանական/ կառուցվածքներ

Հինգերորդ թեման նվիրված է կազմակերպմանը՝ որպես կառավարման հիմնական գործառույթի։ Այս բաժնում ներկայացվում է գծային և շտաբային /ֆունկցիոնալ/ լիազորությունների էությունը, դրանց հիմնական տարատեսակները, կառավարման կազմակերպական կառուցվածքների ձևավորման հիմնական սկզբունքները, բյուրոկրատական /մեխանիստական/ և ադապտիվ /օրգանական/ կազմակերպական կառուցվածքների հիմնական տեսակները, վերջիններիս առավելություններն ու թերությունները։

**Թեմա 6. Մոտիվացիան և դրա ձևերը**

- մոտիվացիայի էությունը և նախասկզբնական հիմնադրույթները
- մոտիվացիայի բովանդակային տեսությունները
- մոտիվացիայի գործընթացային տեսությունները
- մոտիվացիայի ժամանակակից ձևերը

Վեցերորդ թեման նվիրված է մոտիվացիային՝ որպես կառավարման հիմնական գործառույթի։ Այս բաժնում ներկայացվում է մոտիվացիայի էությունն ու նախասկզբնական հիմնադրույթները, մոտիվացիայի բովանդակային և գործընթացային տեսությունները, ինչպես նաև մոտիվացիայի ժամանակակից ձևերը։

**Թեմա 7. Վերահսկողությունը որպես կառավարման գործառույթ**

- Վերահսկողության անհրաժեշտությունը կառավարման գործընթացում
- Վերահսկողության գործընթացի հիմնական փուլերը

- Վերահսկողության կազմակերպումը ժամանակակից կազմակերպություններում
- Աուդիտ վերահսկողություն

Յոթերորդ թեման նվիրված է վերահսկողությանը՝ որպես կառավարման հիմնական գործառույթի: Այս բաժնում ներկայացվում է վերահսկողության էությունն ու անհրաժեշտությունը, նախնական, ընթացիկ և եզրափակիչ վերահսկողության իրականացման առանձնահատկությունները ժամանակակից կազմակերպություններում: Այնուհետև՝ ներկայացվում է կառավարման գործընթացի հիմնական փուլերը և աուդիտ վերահսկողության առանձնահատկությունները:

**Թեմա 8. Կառավարման մեթոդները**

- կառավարման մեթոդների էությունն ու դասակարգումը
- կառավարման վարչակազմակերպական մեթոդներ
- կառավարման տնտեսական մեթոդներ
- կառավարման սոցիալ-հոգեբանական մեթոդներ

Ութերորդ թեման նվիրված է կառավարման մեթոդներին: Այս բաժնում ներկայացվում են կառավարման 3 հիմնական մեթոդները և դրանց գործարկման առանձնահատկությունները տնտեսավարման ժամանակակից պրակտիկայում:

**Թեմա 9. Կառավարման կապակցող գործընթացները**

- կոմունիկացիաները կառավարման համակարգում
- կոմունիկացիոն գործընթացի տարրերը և փուլերը
- միջանձնային և կազմակերպական կոմունիկացիաներում հանդիպող արգելքները
- կառավարչական որոշումների էությունը և դասակարգումը
- կառավարչական որոշումների իրագործման կազմակերպումը

Իններորդ թեման նվիրված է կառավարման կապակցող գործընթացներին, մասնավորապես՝ խոսքը վերաբերում է կոմունիկացիաներին և կառավարչական որոշումներին: Այս բաժնում ներկայացվում է կոմունիկոցիան գործընթացի տարրերը և փուլերը, ինչպես նաև միջանձնային և կազմակերպական կոմունիկացիաներում

հանդիպող հիմնական արգելքները: Այնուհետև՝ ներկայացվում է կառավարչական որոշումների ընդունման էությունը և հիմնական ձևերը:

**Թեմա 10. Կազմակերպությունների կազմակերպաիրավական ձևերը և դրանց կառավարման առանձնահատկությունները**

- կազմակերպությունների կազմակերպաիրավական ձևերը
- առևտրային կազմակերպություններ
- ոչ առևտրային կազմակերպություններ
- իրավաբանական անձանց միություններ

Տասերորդ թեման նվիրված է կազմակերպությունների կազմակերպաիրավական ձևերին և դրանց կառավարման առանձնահատկություններին: Մասնավորապես՝ ներկայացվում են առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների հիմնական ձևերն ու կառավարման առանձնահատկությունները:

**Թեմա 11. Խմբերի կառավարումը: Իշխանություն և առաջնորդում**

- խմբերի տեսակները և կազմավորման պատճառները
- իշխանություն և դրա ձևերը
- առաջնորդման էությունն ու ոճերը
- առաջնորդման վարքագծային և իրավիճակային տեսությունները

Տասնմեկերորդ թեման նվիրված է խմբերի կառավարմանը, իշխանությանն ու առաջնորդմանը: Այս բաժնում ներկայացվում են խմբերի տեսակները և կազմավորման պատճառները, ներկայացվում եմ ձևական և ոչ ձևական խմբերը, կոմիտեները, ինչպես նաև ոչ ձևական խմբերի հիմնական բնութագրերը: Այնուհետև՝ ներկայացվում են իշխանության ձևերը, առաջնորդման ոճերը, վարքագծային և իրավիճակային տեսությունները:

**Թեմա 12. Կոնֆլիկտների, փոփոխությունների և սթրեսների կառավարում**

- կոնֆլիկտների էությունը և ձևերը
- կոնֆլիկտի առաջացման պատճառները և ձևերը
- կոնֆլիկտների կառավարման մեթոդները
- Փոփոխությունների կառավարման էությունը և փուլերը

- Սթրեսի էությունը և ձևերը
- Սթրեսային իրավիճակների կառավարման մեթոդները

Տասներկուերորդ թեման նվիրված է կոնֆլիկտների, փոփոխությունների և սթրեսների կառավարման առանձնահատկություններին: Այս բաժնում ներկայացվում են կոնֆլիկտների էությունը, առաջացման պատճառները, հիմնական ձևերն ու զարգացման փուլերը, ինչպես նաև կոնֆլիկտների կառավարման հիմնական մեթոդները: Այնուհետև ներկայացվում են փոփոխությունների և սթրեսների կառավարման հիմնական փուլերը ժամանակակից կազմակերպություններում:

**Թեմա 13. Մարդկային ռեսուրսների կառավարումը**

- մարդկային ռեսուրսների կատեգորիաները
- մարդկային ռեսուրսներին առնչվող ծախսերի վերլուծությունը
- կառավարչական անձնակազմը և դրա կատեգորիաները
- մարդկային ռեսուրսների նկատմամբ պահանջի որոշումը
- մարդկային ռեսուրսների կառավարման փուլերը

Տասներեքերորդ թեման նվիրված է մարդկային ռեսուրսների կառավարմանը: Այս բաժնում ներկայացվում են մարդկային ռեսուրսների կատեգորիաները, կառավարման տարբեր մոտեցումների համեմատական բնութագրերը, իրականացվում է մարդկային ռեսուրսներին առնչվող ծախսերի վերլուծություն և մարդկային ռեսուրսների նկատմամբ պահանջի որոշում, ինչպես նաև հանգամանորեն ներկայացվում են մարդկային ռեսուրսների կառավարման փուլերը:

**Վերջնական քննության հարցեր**

1. Կառավարման անհրաժեշտությունը, էությունը և զարգացման փուլերը
2. Կառավարման մեթոդաբանությունը և սկզբունքները
3. Կազմակերպությունների ձևերը և կառավարման մակարդակները
4. Գիտական կառավարման դպրոց
5. Վարչական դպրոց
6. Մարդկային հարաբերությունների և վարքաբանական գիտությունների դպրոց

7. Քանակական դպրոց
8. Համակարգային և իրավիճակային մոտեցումները կառավարման գործընթացում
9. Հայ կառավարչական մտքի զարգացման պատմություն
10. Կազմակերպությունը որպես սոցիոտեխնի¬կական համակարգ
11. Նպատակների դասակարգումը
12. Կազմակերպության կառուցվածքի բնութագրությունը
13. Կազմակերպության խնդիրների դասակարգումը
14. Տեխնոլոգիայի էությունը և դասակարգումը
15. Մարդը որպես կազմակերպության ներքին փոփոխական
16. Կազմակերպության արտաքին միջավայրի բնութագրությունը
17. Ուղղակի և անուղղակի ներգործության միջավայրեր
18. Ռազմավարական պլանավորման էությունը և խնդիրները
19. Ռազմավարական պլանավորման տրամաբանությունն ու փուլերը
20. Ռազմավարական պլանավորման մակարդակները
21. Ռազմավարական վերլուծության գործիքները (Անսոֆի մատրիցա, Պորտերի մատրիցա, Ջ.Է.-Մակքինսի մատրիցա)
22. Ռազմավարական վերլուծության գործիքները (SWOT վերլուծություն, ԲԽԽ մատրիցա)
23. Գործարարության ծրագրի էությունը, կառուցվածքը
24. Գործարարության ծրագրի մշակման մեթոդաբանությունը
25. Գործարարության CANVAS մոդելը
26. Կազմակերպման գործառույթի էությունը
27. Գծային և շտաբային լիազորություններ
28. Լիազորությունների պատվիրակում և պատասխանատվություն
29. Կառավարման կազմակերպական կառուցվածքի տարատեսակները
30. Բյուրոկրատական /մեխանիստական/ և ադապտիվ /օրգանական/ կառուցվածքներ
31. Մոտիվացիայի էությունը և նախասկզբնական հիմնադրույթները
32. Մոտիվացիայի բովանդակային տեսությունները

33. Մոտիվացիայի գործընթացային տեսությունները
34. Մոտիվացիայի ժամանակակից ձևերը
35. Վերահսկողության անհրաժեշտությունը կառավարման գործընթացում
36. Վերահսկողության գործընթացի հիմնական փուլերը
37. Վերահսկողության կազմակերպումը ժամանակակից կազմակերպություններում
38. Ուղիղ վերահսկողություն
39. Կառավարման մեթոդների էությունն ու դասակարգումը
40. Կառավարման վարչակազմակերպական մեթոդներ
41. Կառավարման տնտեսական մեթոդներ
42. Կառավարման սոցիալ-հոգեբանական մեթոդներ
43. Կոմունիկացիաները կառավարման համակարգում
44. Կոմունիկացիոն գործընթացի տարրերը և փուլերը
45. Միջանձնային և կազմակերպական կոմունիկացիաներում հանդիպող արգելքները
46. Կառավարչական որոշումների էությունը և դասակարգումը
47. Կառավարչական որոշումների իրագործման կազմակերպումը
48. Կազմակերպությունների կազմակերպաիրավական ձևերը
49. Առևտրային կազմակեր-պություններ
50. Ոչ առևտրային կազմակերպություններ
51. Իրավաբանական անձանց միություններ
52. Խմբերի տեսակները և կազմավորման պատճառները
53. Իշխանություն և դրա ձևերը
54. Առաջնորդման էությունն ու ոճերը
55. Առաջնորդման վարքագծային և իրավիճակային տեսությունները
56. Կոնֆլիկտների էությունը և ձևերը
57. Կոնֆլիկտի առաջացման պատճառները և ձևերը
58. Կոնֆլիկտների կառավարման մեթոդները
59. Փոփոխությունների կառավարման էությունը և փուլերը
60. Սթրեսի էությունը և ձևերը

61. Սթրեսային իրավիճակների կառավարման մեթոդները
62. Մարդկային ռեսուրսների կատեգորիաները
63. Մարդկային ռեսուրսներին առնչվող ծախսերի վերլուծությունը
64. Կառավարչական անձնակազմը և դրա կատեգորիաները
65. Մարդկային ռեսուրսների նկատմամբ պահանջի որոշումը
66. Մարդկային ռեսուրսների կառավարման փուլերը

**4. Գրականության ցանկ**

*Հիմնական գրականություն*


1. Մենեջմենթ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Յու. Մ. Սուվարյանի ընդհանուր խմբագրությամբ (երրորդ՝ լրացված, բարեփոխված հրատարակություն), Երևան, Տնտեսագետ, 2009թ.
2. Կիրառական մենեջմենթ, տ.գ.դ., պրոֆ. Յու.Մ. Սուվարյանի ընդ.դեկ. և խմբ., Եր., ԱՌՏ, 2004
3. Սուվարյան Յու.Մ., Սարինյան Ռ.Ն., Միրզոյան Վ.Ա., Հովհաննիսյան Կ.Ա., Հայ կառավարչական մտքի պատմության ուրվագծեր, Եր., Տնտեսագետ, 2005
4. Դրաքեր Փ., Ձեռնարկիչը և նորի ստեղծումը, Եր., Ապոլոն, 1993
5. Альберт М., Мескон М., Хедоури Ф. Основы менеджмента. М.: Вильямс. 2011
6. Бурганова Л.А. Теория управления: Учеб. пособие. 2-е изд – М.: ИНФРА-М, 2021
7. Бурков В.Н., Новиков Д.А., Буркова И.В. Механизм управления. СПб.: Ленанд. 2018
8. Виханский О.С., Наумов А.И. Менеджмент. Учебник. М.: Магистр. 2011
9. Газарян А.Е. Менеджмент и организация. М.: Манн, Иванов и Фербер. 2011
10. Друкер П.Ф. Практика менеджмента. Вильямс, 2008
11. Друкер П.Ф. Энциклопедия менеджмента. Вильямс, 2008
12. Друкер П.Ф. Эффективный руководитель: пер. с англ., Вильямс, 2007
13. Косьмин А.Д., Свинтицкий Н.В., Косьмина Е.А. Менеджмент. Практикум. Учебное пособие для студентов учреждений среднего профессионального образования. М.: Академия. 2020
14. Крымов С.М. Стратегический менеджмент. Учебное пособие для студентов высшего профессионального образования. М.: Академия. 2011
15. Петухова С.В., Чередникова Л.Е., Шеметов П.В. Менеджмент: управление организационными системами. Учебное пособие. М.: Омега-Л. 2019
16. Рыженкова И.К. Профессиональные навыки менеджера. Повышение личной и командной эффективности. М.: Эксмо. 2011

17. Фонс Тромпенаарс и Пит Хен Keберг. 100 ключевых моделей и концепций управления. М. 2022
18. Ackoff, R. L., H. J. Addison and S. Bibb. 2007. Management f-Laws. Triarchy Press Ltd.
19. Cole, G. A. 2011. Management Theory and Practice, 7th edition. International Thomson Business Press
20. Drucker, P. F. 2008. The Essential Drucker: The Best of Sixty Years of Peter Drucker's Essential Writings on Management. Harper Paperbacks.
21. Griffin, R. W. 2010. Management, 10th edition. South-Western College Pub
22. Miller, F. P., A. F. Vandome and J. McBrewster, Editors. 2009. Motivation: Motivation. Drive Theory, Cognitive Dissonance, Maslow's Hierarchy of Needs, Frederick Herzberg, Self-efficacy, Equity Theory, Expectancy Theory. Alphascript Publishing
23. Robbins, S. P. and M. Coulter. 2011. Management, 11th edition. Prentice Hall.
24. Thomas, A. B. (2002) Controversies in Management: Issues, Debates, Answers (2nd ed.) London: Routledge
25. Watson, T. (2002) Organising and Managing Work. Harlow: FT Prentice Hall. Ackoff, R. L., H. J. Addison and J. Gharajedaghi. 2010. Systems Thinking for Curious Managers: With 40 New Management f-Laws. Triarchy Press Ltd

## *Լրացուցիչ գրականություն*

26. Ансофф И. Стратегическое управление. М., Экономика, 1989
27. Афонин И.В. Инновационный менеджмент и экономическая оценка реальных инвестиций. Учеб. пособие, М., Гардарики, 2020
28. Бодди Д., Пейтон Р. Основы менеджмента. 3-е изд. Доп. СПб, Питер, 2018
29. Боумен К. Стратегия на практике. СПб, Питер, 2018
30. Бреддик У.М. Менеджмент в организации. Теория и практика. М., ИНФРА – М, 2021
31. Бриджес У. Управление компанией в период структурных изменений. Вильямс, 2007
32. Ван Ассен М., Ван ден Берг Г., Питерсма П. Ключевые модели менеджмента. 60 моделей, которые должен знать каждый менеджер. М.: Бином. 2016
33. Виханский О.С. Стратегическое планирование: Учебник, М.: Гардарики, 2008
34. Веснин В.Р. Основы стратегического менеджмента: Учебник / Институт международного права и экономики - М.: Триада ЛТД, 2020
35. Грант Р.М. Современный стратегический анализ. СПб.: Питер. 2011

36. Грей К. Организации: теории, конфликты и менеджеры: пер. с англ., Гуманитарный центр, 2008

37. Грушенко В.И. Менеджмент. Восприятие сущности менеджмента в условиях стратегических изменений. Учебное пособие. М.: Мнфра-М. 2021

38. Гуськов Ю.В. Стратегический менеджмент. М.: Альфа-М. 2011

39. Деревяго И.П. Менеджмент. Ответы на экзаменационные вопросы. М.: ТетраСистемс. 2011

40. Дипроуз Д. Управление проектами. Эксмо, 2008

41. Добрина Н.А., Щербакова Ю.В. деловой практикум. Учебное пособие. М.: Альфа-М. 2011

42. Загородников С.В. Краткий курс по менеджменту. Учебное пособие. М.: Окей Книга. 2011

43. Здерсхейм Э. Лучшие идеи Питера Друкера. Питер, 2008

44. Зуб А.Т. Стратегический менеджмент. Учебник для ВУЗов, Проспект, 2008

45. Зубкова А.Г., Мусаева Д.Э. Стратегический менеджмент. Учебник. М.: Академия. 2011.Иванус Либроком. 2011

46. Ивасенко А.Г. Никонова А.С. Разработка управленческих решений. Учебное пособие для ВУЗов, КноРус, 2008

47. Карташова Л.В., Никонова А.С. Организационное поведение. Учебник для ВУЗов, ИНФРА-М, 2008

48. Кибанов А.Я. Основы управления персоналом: Учебник. – 2 – е изд., перераб. и доп. – М.: ИНФРА – М, 2007

49. Киллен К. Вопросы управления. М., Экономика, 1981

50. Крейнер С. Ключевые идеи менеджмента. М., ИНФРА – М, 2002

51. Кухарчук А.М. Управление-менеджмент. Лидерство и руководство. Теоретические основы. Тесты. М.: Экоперспектива. 2011

52. Кэмпбел Д., Стоунхаус Дж., Хьюстон Б. Стратегический менеджмент. М., ООО “Издательство Проспект”, 2003